

թեան առթիւ կը կատարուէին, կ'ըսէ՝ թէ
 շատերն իրենց ամբողջ ունեցածը մէկ օ-
 րուան մէջ կը վատնեն՝ յետոյ զղջալու
 համար: Եւ այս չափով չէր վերջանար.
 այդ «խելայեղեալ» արբեցութիւնը հասա-
 րակօրէն կ'աւարտէին «ի կոիւս եւ ի թըշ-
 նամանս... ի հարուածս եւ ի գանս. ուստի
 բազում անգամ եւ սպանութիւնք, յորմէ
 բանտ եւ կապանք եւ տուգանք եւ յա-
 փըշտակութիւն ընչից, եւ հատումն անդա-
 մոց եւ զրկումն ի հայրենեաց եւ հալա-
 ծանք յօտարութիւն, եւ կամ մահ փոխա-
 նակ մահու» (517-8): Այս ալ, աւանդ,
 հայ ռամկին բաժինն էր անժուժկալութեան
 երեսէն, մինչ ազնուականն անպատիժ կը
 հպատակէր անոր ամէն թելադրութեանց,
 եւ անվրդով կը հիւծէր իւր գոյութիւնն
 ախտին գրկաց մէջ: Ուխտագնացութիւնն
 անգամ, բարեպաշտութեան այդ գործը,
 առանց արբեցութեանց անկարող էր կա-
 տարել հայ ժողովուրդը. եւ ասո՛ր դէմ կը
 զգուշացնէ Շահապիվանու ժողովը, պա-
 տուիրելով սրբոց տարեդարձին տօնախմ-
 բութեանց «պատուոյ եւ սրբութեան ըզ-
 գոյշ» լինել, որպէս զի, կ'ըսէ, մի՛ գուցէ
 «ցասումն աշխարհի հասցէ փոխանակ բա-
 րեխօսութեան» (ԺԵ): Նոյն անկարգութիւնն
 աւելի պարզ կը բացատրէ Յհ. Եզնկացին,